



L. P. D. F. D. S.

ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԵԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ ԵՐ ԱԶԳԱՅԻՆ  
**ԱՄՍԱԳԻՐ**

Աշխարհ. Աշխարհ. ՀԱՅՈՒԹ ԵՈՒԹԵՐԻՒԹ ՅՈՒԼԻՄ 1894 թ.

ԳՐՈՒԱԿԱՆ

ԳՈՐԾԻ Ա. ԽԱՐՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՅՑՈՒՄ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ  
(Հարունակութիւն), \*

որ և զբաւ Աստուած այն օրից, երբ հաս-  
տատեց ամուսնութեան խորհուրդը։ Նվախա-  
մարդի ամուսնութեան իրագործուելուց յե-  
տոյ ասուած է. «Վասն այնորիկ թողքէ այր  
զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ  
կնոջ իւրոյ, և եղիցին երկաքեան ի մարմին միւ։  
Ուրեմն պսակուողը պէտք է թողնէ ազգային  
տունն և ուրիշ տնից առնէ իւր ամուսինը։  
Այդ ի հարկէ այն ժամանակից կստանար իւր  
իրագործութն, երբ զանազան ընտանիքներ հե-  
տըզհետէ սկսէին տարրերուել իրարից. այդ-  
տեղ միայն սկզբունքն է արտայայտուած այն  
շրջանում՝ երբ գեռ միմիայն ծնողներն և որ-  
դիներն էին ընտանիք կազմելու։ Այդ սկզբ-  
րունքը պէտք է անշուշտ իւր կատարելու-  
թիւնն ստանար քրիստոնէութեան մէջ։

Հայաստանեալց Եկեղեցին ունի չհասութեան կանոն իւր սկզբնաւորութեան օրերից սկսեալ և ահա երկար դարերի ընթացքում գործադրուումէ։ Այդ կանոնը մեծամեծ պէ-

\* Տես. Նախընթաց Համարը

ձերի առարկայ է, վասն զի այժմ այլընդայ-  
լոյ են հասկանում ուստի հարկ է սրոցել՝

Դասի թէ ինչ սկզբանց վրայ է հաստա-  
տուած չհասութեան կանոնը.

Բ. Թաէ որո՞նք են նախնեաց կանոնները.

Գ. Թաէ ի՞նչ կանոնով պէտք է ընթա-  
նանք:

Ա. Չհասութեան արգելման հիմնական սկզբ-  
րունքը քրիստոնէական սէրն է: Աիրոյ պա-  
տուիրանն այնքան մեծ աեղէ բռնում Քրիս-  
տոսի վարդապետութեան մէջ, որ ոչ մի ա-  
ռաքելական եկեղեցի չի կարող թոյլատրել  
մի որ և իցէ կարգ գորա հակառակ սկզբուն-  
քի վրայ հաստատուած \*: Եկեղեցու ձգտումն  
է ընդարձակել ընկերական սիրոյ յարաբերու-  
թեան սահմաններն և որքան կարելի է՝ ա-  
ռաւել մեծ շրջանում կապակցել հաւատա-  
ցողներին:

Եթէ Եկեղեցին իւր բոլոր միջոցները գոր-  
ծադրէ միմիայն եղայլների կամ ազգական-  
ների մէջ սէր հաստատելու, նա ընդարձակած  
չի լինի սիրոյ կոսպակցութեան սահմանները,  
վասն զի ազգականք արդէն ունին սիրոյ մէկ  
և գուցէ շատ հիմնաբարեր, որպէս արիւնակ-  
ցութիւն, ընդհանուր պատիւ, յարաբերու-  
թեան յաճախումն են. և ուրեմն նա միայն  
եղած և խախտուածը կհաստատէ: Կա պէտք  
է իւր միջոցներով սիրոյ նոր կապեր կռէ, որ-  
պէս զի օր ըստ օրէ առաւելանայ այն մարդ-  
կանց թիւն, որոնք սիրոյ մի շղթայով յե-  
րիւրուումեն:

Հզօր և անխզելի են Եկեղեցու դրած կա-  
պերը, վասն զի դոքա թէ հոգեոր են և թէ  
մարմնաւոր միանգամայն, ուստի և ոչ մի ու-  
րիշ հաստատութեան կապեր չեն կարող այն-  
պէս ամուր լինել և բարերար հետևանքներով  
առատ, որքան այդ աստուածային հաստա-

\* Եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքա-  
տաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր  
ոչ ունիցիմ: ոչ ինչ օդափիմ: . Եթէ զլեզուս մարդ.  
կան խօսիցիմ և զհրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ:  
եղէ ես իրրե զպինձ, որ հնչէ, կամ իրրե զծընծ-  
դայս, որ զօղանչին: Կորնթ. ԺԿ. 31:

տութիւնը: Ի՞նչ կարող է բռնել Եկեղեցու  
տեղն, երբ մի ազգի լիզուական, երկրային,  
արիւնակցական, բնաւորական և այլ կապերը  
պսակուում են նաև ծշմարիտ հաւատքի միու-  
թեամբ, տալով նորան ամրութեան համար  
ազգային բնորոշ արտայայտութիւն: Եւ ի՞նչ  
կարող է փոխարինել նորան, երբ ամբողջ մարդ-  
կութեան միութեան համար ևս տալիս է մէկ  
ամուր կապ «քրիստոնէութիւն» բառի ար-  
տայայտած սկզբունքով, որ բնաւորուելով իւ-  
րաքանչիւր ազգի կեանքի մէջ, միանգամայն  
և հանրամարդկային է: Աշմարիտ քրիստոնէ-  
ութիւնն օղակ է կազմում իւրաքանչիւր ազ-  
գի միահուռն կապակցութեան համար և այդ  
ազգերի բոլոր օղակները կապկազումէ և գարձ-  
նում՝ ընդհանուր մարդկութիւնը պարունա-  
կող՝ մի շղթայ: Մարդկութեան բաղկացուցիչ  
տարրն ազգն է, ազգինը՝ համայնքն, իսկ հա-  
մայնքինն — ընտանիքը: Քրիստոնէութիւնն  
այստեղից է սկսում իւր այդ աստուածային  
սիրոյ շղթան հիւսել:

Աիրոյ այդ հիւսուածքի հիմնական հանգոյ-  
ցը պսակն է, որ արգելուելով մօտաւոր ազ-  
գականների մէջ կայանում է հեռաւորների  
կապակցութեամբ և ընդպայնումէ սիրոյ շլր-  
ջանը: Որչափ մօտաւոր ազգականաց մէջ տըր-  
ուի սիրոյ այդ հիմնաբարեն, այնքան սղուումէ  
սէրը, կարծուումէ և հզօր զարկ է տալիս ե-  
սականութեան զարգացման:

Եթէ սիրիցէք զայնոսիկ, որ սիրենն զձեղ,  
զի՞նչ վարձք իցեն. ոչ ապաքէն և մաքսա-  
ւորք զնոյն գործեն: \*. ասումէ սիրոյ քարո-  
ղիչն ու սիրողութեան կատարեալ օրինակը:  
Կա պատուիրումէ՝ «Ոիրեցէք զթշնամիս ձեր,  
օրհնեցէք զանիծիչս ձեր . . . . . իսկ թշնա-  
մութեան և ատելութեան վերացման քանի՛  
քանի՛ նպաստաւոր են հանդիսանում ամուս-  
նակցական կապերը: Սոյնը չէր լինիլ, և ատե-  
լութեան աւելի զարկ կտար ամուսնութիւնն,  
եթէ միայն մօտաւոր ազգականների մէջ սահ-  
մանափակուեր, այն ժամանակ սէրը միայն

ազգականների մէջ դոյտւթիւն կունենար, այսինքն որոնց մէջ սահմանափակուումէ, ամուսնութեան ասպարէզը, մինչդեռ սիրոյ ամենաբարձր աստիճանն իրական կեանքում՝ ամուսնութեան մէջ է, ստանում իւր պասկը:

Ուրեմն որքան երկարացնենք այն կապն, որ սիրոյ ամենազօրեղ աստիճանն է, պարունակում իւր մէջ այնքան ընդարձակած կլինիք և սիրոյ շրջանն ու սահմանը: Մինչդեռ որքան կարձենք, անյբան կասհմանափակենք և ընդ նմին զարկ կտանք եսապաշտութեան:

Հռչակաւոր գերման իրաւարան, արդարագասութեան գաղտնի խորհրդական պլուֆեսոր ֆոն Շուլտէ՝ խօսելով պասկի այն մեծ նշանակութեան վրայ, որ սահմանուած է նախախնամութիւնից՝ ընտանիքին՝ մանաւանդ ազգակցական և ընկերական սիրոյ վերայ ընդարձակման համար: ասումէ՝ «Վրգարե պէտք է ոչ միայն մէկ ընտանիքի անդամներն, այլ մարդկանց առաւել մեծ թիւ սերտ սիրոյ մէջ ամփոփուի, որպէս զի սիրոյ կապերն ընդպահուին, և նոր անդամոց միանալով վատ տարրերն արտաքսուին ու նոր, լաւ և կենսազօր տարրեր ներս պատուասուին: Ասկ եթէ ամուսնութիւններ լինին միենոյն ընտանիքի անդամոց մէջ, որոնք զեռ կատարելապէս զիտակից են սիրոյ սերտ կապին, այն ժամանակ ամեն մէկն իւր անձի մէջ շատ կապեր միացնելով, կտրուում հեռանումէ միացեալներից և դորա քնական հետեւանքն է եսապաշտութիւնը: Այսպիսով աշխարհի բարոյական կարգապահն է ներկայանում՝ մօտիկ ազգականաց ամուսնութեան սրգելքն, որ թէ և անհաւասար ծաւալով, բոլոր՝ ոչ լիովին ապականուած՝ ազգերի մէջ նանաչուած էր, սակայն քրիստոնէութեան մէջ պէտք էր անհրաժեշտապէս մեծ նշանակութիւն ստանար»:

Արդ՝ Աւետարանը քարոզումէ որ Աստուած սէր է, որ տեղ սէր կայ, այն տեղ է Աստուած, պարզէ ուրեմն որ Հայաստանեայց Եկեղեցում այն պատկը կվայելէ լիահատար օրհնութիւն, որ ամփոփումէ իւր մէջ աստուածային սիրոյ

ամենաշիմնական սկզբունքը<sup>1</sup>: Կամ ուրիշ կերպ ասած՝ այն պսակն է Աւետարանի ոգուն համաձայն, որ ամենից շատ զարկ է տալիս սիրոյ շրջանի ընդարձակման:

Այս այս սկզբունքն է շեշտում և ս. ԱՇնորհալին՝ ասելով. «Եւ քանզի ամենայն փոյժ Աստուծոյ և աստուածայնոցն յաղագս սիրելոյ է զմիմիանս մարդկան, վասն այսորիկ իրաւունս համարեցան, որք հոգւովն օրինագրեցին, զօտարացեալսն ի միմեանց միանալ սիրով ամուսնութեանն կապակցութեամբ, իսկ զմերձաւորսն արեամբ բաւական վարկան համազգակցութեամբն միայն ունել զհաղորդութիւն սիրոյ առ իրեարս»:

«Եւ այս է առաջին պատճառ ոչ տալոյ թոյլ համացեղիցն ամուսնութեան. են և այլք յուրակը՝ զորս իմաստնոցն թողաք քննել»:

Աիրոյ այդ սկզբունքից բղխումն արդէն և այլ պարագայք այսպէս զոր օր. սրբազնացութիւնը մօտիկ ազգականաց մէջ, ըստ որում ազգականաց մօտաւոր և յաճախուող յարաբերութեամբն ապահովուած կլինի զանազան ազգապղծութիւններից: Այսպէս և առողջ սերունդ ունենալու համար՝ առաւել հիմք ունինք յուսալու ազգախառնութիւններից հեռու ամուսնութեանց վրայ, վասն զի բազմաթիւ բժշկական օրինակներ ցոյց են տալիս, որ ազգախառնութեան սերունդը թոյլ և տկար է լինում մարմնապէս և հոգեպէս. այլ և թերակատար ծընունդներ յաճախ են պատահում: այն է՝ խուզ ձեռնատ են. որպէս Անդիլիայումն Ֆրանսիայում: Մինչեւ անդամ մարդկանց անձնական շահերը պահանջումն աւելի և աւելի շատացնել նորանոր բարեկամաց թիւն և ոչ թէ ունեցածների շղթայով վերստին կապկրպութիւն:

Բայց թողնելով վերջին կէտերը, կշեշտենք սրբազնացութիւնը, վասն զի այդ մեծ կախումն

1. Սէր «ոչ յանդգնի: ոչ խնդրէ զիւր, ոչ գոզը ոի, ոչ խորհի զչար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն»: 1. Կորնթ ԺԳ, 5:

2. Ընդհանր. Էջ. 85:

ունի սիրոյ սկզբունքից: Ազգականութեան կապըն, Աստուծոյ շնորհումն սէրն է, այդ սէրն եղբայրական սուրբ սէր է, թովնել այդ և ամուսնական կապակցութեամբ սիրել՝ նշանակումէ արհամարհել այդ սուրբ սէրն և փոխարինել խառնակութեան սիրով, քանի որ առաջինն առաւել բարձր առաքինութիւն է քան երկրորդը:

Ահա տեսնում ենք որ մինչեւ անգամ հին ուխտում սրբութիւնն առանձնապէս պահանջուումէ ազգականներից: Այնտեղ Աստուած հրամայում է հեռու կենալ հեթանոսական պղծութիւններից և իւր սուրբ անունը չպըղծել ազգախառնութիւններով: Նա պատուիրումէ, ըստ ամենայն գնացից երկրին եղիպտացւոց՝ յորում պանդխուեցարուք՝ մի առնիցէք, և ըստ գնացից երկրին քանանցւոց՝ յոր ևս ապրայց զձեղ՝ մի առնիցէք: Եւ թուելով այն ապօրինութիւնք, որոնք օտարներից մըտնումէին չըեից մէջ, ասումէ: «Եւ մի՛ պըղծեցիք այնու ամենայնիւ, զի այնու ամենայնիւ պղծեցան ազգըն, զոր ես մերժեցից յերեսաց ձերոց. և եղեւ գարշելի երկիրն . . . .<sup>2</sup>: Այդ ազգապղծողներին մինչեւ անգամ քարկոծելու և այրելու հրաման է արուում<sup>3</sup>:

Մովսիսական օրէնքը մի առ մի արգելումէ այն ազգախառնութիւնք, որոնք մտելէին հեթանոսական սովորութիւններից չըեից մէջ<sup>4</sup>: Այնտեղ միանդամ ընդ միշտ արգելուումէ ամուսնութիւնն ազգականաց մէջ բայց մինչեւ որ աստիճանը՝ յայտնի չէ: Յիշուումին խործ մայր, հօրաքոյր, մօրաքոյր. հօրեղբօր կին, քոյր և խորթ քոյր, եղբօր արձակած կինը, որդու կինը, որդու աղջիկ—նոյն և կնոջ կողմց, մայր և աղջիկ միաժամանակ և երկու քոյրեր միանդամայն: <sup>5</sup>

Ո՞ւ այս յիշատակութիւնը լիակատար չէ՝ երկումէ նոյն խակ նորանից, որ հօր և իւր

աղջկայ ամուսնութեան արգելքը չէ յիշուած, թէև զիտենք որ չէր կարող ընդունուիլ<sup>6</sup>: Միւս կողմից այդ օրէնքին հակառակ դէպքեր էլ լինում էին, որպէս եղբօր և քրոջ<sup>7</sup>, կամ երկու եղբայրների օրգւոց մէջ<sup>8</sup>: Ուրեմն Մովսիսական օրէնքի մէջ ոչ թէ մէկ լիակատար օրէնք է արուում այլ միայն սկզբունքը՝ թէ ազգականների մէջ ամուսնութիւն չպէտք է լինի և այդ միայն հեթանոսական նորամուտ սովորութեանց, որոնք լրացրին այդ օրէնքի պահասութիւնները զոր օրս վերացնելով՝ եղբօր մահից յետոյ նուին (հարսին) առնելն, որ ըստ Մովսիսական օրինաց ոչ միայն թոյլատրուած էր, այլև հրամայուած էր<sup>9</sup>:

Կոյն սկզբունքը պահպանուեց և քրիստոնէութեան սկզբի օրերում: Պօղոս առաքեալի ուղղակի պոռնկութիւն է անուանում ազգախառնութիւնը: Մինչեւ անգամ համեմատութեամբ է դատապարտում ասելով՝ «այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ և ի հեթանոս, որպէս թէ զիին հօր իւրոյ ունել»: Այդ այն աստիճան դատապարտելի է համարում: որ մինչեւ անգամ որոշումէ: «Մատնել զայնպիսին սատանայի ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի յաւուրն ցեառն մերոյ Յիշուսի Քրիստոսի» <sup>10</sup>:

Ուրեմն քրիստոնէութեան մէջ ևս ազգականների ամուսնութիւնն արգելուած է սկզբունքով <sup>11</sup>: Այն որ հին ուխտի մէջ պղծութիւն է համարուում Աստուծոյ սուրբ անուան համար և արգելուում պէտք է անպատճառ իւր կատարեալ և որոշ արգելքին հանդիպէր նոր ուխտի մէջ: Պօղոս առաքեալը յիշումէ միայն իւր օրով պատահած դէպքը, սակայն երբ քրիստոնէական եկեղեցիները հետզետէ կազմակերպուեցան, այնուհետև արգեն առաքելական առանդութեան որոշ արտայատութիւն պէտք է տային:

1. Տես. Ռուդ. Ժ. 2. Անդ. 24. տես. և Ի. 23.

2. Բ. Թագու ԺԳ. 13. 5. Ա. Մնաց. ԻԳ. 22.

3. Բ. Օր. ԻԵ. 5—10. Մատթ. ԻԲ. 23. 3. Ա.

Կոր. Ե. 1—5. 6. Տես. և Մատթ. ԺԴ. 4. Մարկ. Զ. 17.

4. Դ. Ա. Ժ. 3. 2. Անդ. 24. տես. և Ի. 23.  
5. Օր. ԻԵ. 20. 22. Եղեկ. ԻԲ. 10. 5. Դ. Ա. Ժ.  
6. 11 և. 4. Դ. Ա. Ժ. 7—18. 10. 11 և. 14.  
17. 19—21. և. Օր. ԻԵ. 20. 22 և.

Այժմ աեսնենք թէ ի՞նչ կանոնվ էր վարուում Հայաստանեայց առաքելական Եկեղեցին:

Բ. Հայաստանեայց Եկեղեցին՝ ինչպէս և քրիստոնէական միւս Եկեղեցիք, վարուում էր իւր ընթացքն առաքելական աւանդութեանց համաձայն: Պեղ յայտնի է, որ առաքեալք հիմնելով Եկեղեցիները երբ որ պէտք էր լինում՝ զրում էին թղթեր և պատուելներ տալիս, սակայն յաճախ բերանացի էին աւանդում: Ինչ որ կարեւոր էր: Պարզ բան է, որ նոցա յաջորդներն ևս այնքան ժամանակ կշարունակէին բերանացի աւանդութեամբ կառավարուել, մինչև որ Եկեղեցին ընդարձակուեր և պէտք զգացուեր այդ աւանդութեան հիմնական կէտերի արձանադրութեան:

Հայաստանեայց Եկեղեցին կենսակից լինելով Ասորոց Եկեղեցուն, ունէր դորա հետ իւր ընդհանուր աւանդութիւնք, որոնք և յետոյ դրերի զիւտի ժամանակ թարգմանուեցան Հայերէնի կամ անփոփոխապէս և կամ ըստ սեփական աւանդութեանց ձեւակերպուելով և Հայոց Եկեղեցուն օդտակար զառնալով \*:

Այն հիմնական աւանդութիւնք, որոնք Ասորոց և Հայոց ո. Հայրերի միջոցով խմբագրուեցան և Հայաստ Եկեղեցու հիմնաքարդարձան, կոչուում են «Առաքելական կանոններ»: Պոցա խմբագրուներ են առաքելական ո. Հայրերն, որպէս յիշուումք. «Եւ արդ այսուհետեւ ամենայն ինչ որ խօսեցաւ ի Տեառնէ ի ձեռն առաքելոց, և առաքեալքն աւանդեցին աշակերտաց իւրեանց, և եղեւ հաւատարիմ և ընդունելի յամենայն կողմանս . . . . : Ըստ որում և դոցանից իւրաքանչիւր կանոն սկըսուումք է «Կարգեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ խօսքերով»:

Ուրեմն նոյն իսկ այդ կանոնները վկայում են թէ դոքա առաքելական աւանդութիւններ

\*. Հայաստանեայց Եկեղեցին երբէք չեղինակութիւն չէ դարձել օտար կանոններն իւր մէջ, առանց ըստ սեփական առաքելական աւանդութեանց և ըստ իւր կազմակերպութեան ձեւակերպելու Վասնորոյ և ուրիշ կանոններ չէր ընդունում առանց իւր բարձրագոյն կանոնադրութեամբ հաստամելու:

Են, որոնք ո. Հայրերի համար մնացել են հաստատուն սկզբունքներ Եկեղեցական կարգ ու կանոնների մէջ:

Հայաստանեայց Եկեղեցին ընթացել է սկըսրից այդ առաքելական աւանդութեամբ, որպէս և Հայապիկանի ժողովը ասում է իւր կանոնների մէջ, «առաքելական և նիկիական կանոնքն հաստատուն կացցեն», ըստ որում և «որ ինչ պիտոյ է ի լուսութիւն ի նոյն կանոնս և մանաւանդ ի մէջ տանս Յորդումայ և կողմանց արևելեաց» ապա կարգեցին . . . . :

Այդ կանոնք Հայոց Եկեղեցու առաքելական աւանդութեան նախնական կանոններն են, ուսաի և Հայապիկանի ժողովը հրամայելով որ դոքա հաստատուն պահուին, իւր նոր կանոններով ևս ցոյց է տալիս թէ որքան ընդհանրացած են եղել դոքա, ժողովը մինչև անդամ յաճախ դոցա ուներն ու դարձուածքներն է յիրարկում՝ յարակից Ա. Գրքի դարձուածքներին և ասացուածքներին:

Արդ դոյն աւանդական կանոնաց մէջ զբանումնենք մեր Եկեղեցու հիմնական կանոնը չհասութեան մասին, որ անշուշտ Ներսէս Աթեծի օրով ակնարկուած և Աշտիշտի ժողովով կրկնուած կանոնն է եղել. «Ո՞նիցիցին ամուսնութիւն օրինաւորք . . . . փախչել աւելի ի մերձաւոր և յազգին տոհմակից խառնակութեան ամուսնութենէն, և մանաւանդ ի մերձաւորական նուրոյ և որ գամ մի այսմ նման լեալ էր ինչ» :

Առաքելական աւանդութեան Լ. Պ. կանոնում ասուած է. «Այսրգեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ, եթէ ի սկզբանէ զուգեաց ամուսնութեամբ զմարդն և օգնական արար միմեանց և օրշնեաց զնոսա. նոյնակէս սահմաննեալ և հաստատեալ հրաման առաքելական՝ սրբութեամբ զուգել յամուսնութիւն

1. Փաւստ. Քիւզ. IV. Դ. Տես և Արքահամ կաթողիկոսի թուղթն առ Մ. Գոշի. «Հարկեցաք գըրել—պինդ ունել զպատուեր Հոգուոյն սրբոյ ի ձեռն օրինաց և մարգարէից, զորս առաքելական կանոնադրութեամբ հաստատեցին սուրբ և ուղղափառ գրդապետք»:

և օրինաօք՝ ի ձեռն աջոյ քսհանսյութեան և  
օրհնութեամբ զուգեսցին։ Ապա բերելով  
լըսսիսական հրամանը, շեշտումէ.

«Սոյնակէս սահմանեալ առաքելական կանով-նաց՝ մարդ ոք մարդ առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւլոյ մի՛ մերձեսցի՛ կամ շնութեամբ կամ ամուսնութեամբ մինչև ի չորրորդ դարմն՝ չունի իշխանութիւն առնել»<sup>1</sup>:

Հայաստանեայց Եկեղեցու սեփական այս  
կանոնը հաստատուն սկզբունք է այդ խնդրում  
այնպէս որ երկրորդ ծնունդում ամռունացող  
ներն և նոցա զաւակները զրկուում են քահա-  
նայական արժանիքից: «Խսկ զպունկորդիս և  
որ յերկրորդացն են՝ ասումէ Ա. Աահակ, նո-  
ցին հաւասար մինչև յերրորդ ծնունդ, ըստ  
առաջին կանոնացն չեռի կացցեն ի կարգէն  
և ի շնորհացն, զի պարկեշտ և սուրբ աներ-  
կւան եղիցի ուստ պաշտօնէից Աստուծոյց:  
Այս կանոնը ցոյց է տալիս թէ ինչ մեծ նշա-  
նակութիւն՝ ունի այդ սկզբունքը Եկեղեցու  
համար: Առաքելական կանոնը կրկնումէ վերս-  
տին Շահապիվանի ս. ժողովում: Այնտեղ կար-  
գում ենք. «Որ զազգական կին առնէ՝ այս  
պղծութիւն և գարշանք յայտնի լիցի, և ան-  
ուանեսցի մի ի միջի ձերում զի մի ոք ընդ  
աղտախանս յարգանդի մարմնոյ իւրոյ խառ-  
նակեցցի ըստ սովորութեան չեթանոսաց և  
անաստուած ամբարիշտ ազգացն, զոր հրա-  
ման առեալ մեծ օրէնուսոյց մարդարէին Մոլ-  
ոսիսի ի Վենարարէն թէ՝ պատուիրեա՞ որդւո-  
ցըն Խորացէի, մարդ ոք մարդ մի մերձեսցի  
առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ՝  
յայտնել զառականս նոցա, և յանէծսն զրէր  
Մովսէս թէ անիծեալ որ ննջիցէ ընդ ազգա-  
կանի արեան իւրոյ:

Արդ մի՛ ոք որ զաստուածպաշտութիւն և  
զքրիստոնէութիւն զգեցեալ և զակրունական  
մկրտութիւն զինիք և դրուշ զարբունական,

զքոյլ կամ զքեռորդի կամ զեղբօրորդի կամ  
զհօրաքոյլ, կամ զայլ ոք յազգի անդ իւրում  
մինչև ի չորրորդ ծնունդն կին զոք մի՛ իշխեա-  
ցէ առնել զի մի՛ պատառումն եղիցի սուրբ  
հաւատոյն, քանզի բարկութիւն անձին իւ-  
րում գանձէ այնպիսին: Որդի անօրինի թե-  
րակատար եղիցի և զաւակ անօրէն անկողնոց  
մի՛ բողբոջեսցի. զի թէ, զիին եղբօր իւրոյ՝  
մեծի մարգարէին և կարապետի Յովհաննու  
զլուխն կտրեցաւ, ազա զինչ ևս աղէտս չը-  
համարեցուք, որ զազգական իւր կին առնէ,  
զոր ու հրամայեն օրէնքն քրիստոսականք և  
սուրբ առաքեալքն՝ աշակերտքն Քրիստոսի:

Արդ եթէ ոք ընդդիմացեալ օրինացս և  
հաստատեալ կանոնիս, և ամբարշտեալ ի հեռ  
թանոսութիւն և ի հրէութիւն կործանեսցի,  
ընդ նոսին եղիցի և բաժին նորա և ի Արբոյ  
Նկեղեցւոյ օտարացեալ եղիցի.....:

Ցեսնում ենք որ Կահապիվանի ժողովը հիմնուումէ տռաքելոց հրամանի վրայ և բացէի բաց արգելումէ ամուսնութիւնն ամինչև ի չորրորդ ծնունդնա, որին հակառակ ընթացողներին սոնկալի պատիմներ է նշանակում և նզովում: Անշուշտ այդ ամինչև ի չորրորդ ծնունդնա խօսքը Հայոց համար բոլորովին հասկանալի արտայայտութիւն է եղել և բացառութեան կարօւ չէր:

‘Սոյն հիմնական կանոնը յիշատակուումէ և  
‘Աերսէս Բ. Աշտարակեցու պատժական կանո-  
նագ մէջ, որ տեղ ասուած է.

« Վասն զազդականն կին առնելոյ զերբարդն ։

Դորա Նախընթաց կանոնն էլ ասում է... Եթէ  
ոք զկին հօր իւրայ ունիցիցի ոչ ընդունի զնա կա-  
նոնն և ի ս. եկեղեցի նա մի մացէ և յամենայն  
ժողովս, նզովեալ լիցի մինչև գարձցի և ապաշխա-  
րեցէ.... Եթէ հայր զորդոյ կին ունիցիցի կամ եղ-  
բայր զերօրոյ նոյն պատուհաս և նզովք լիցին, այլ  
զջերմ հարազատի և զազդականի զկին ոք մի իշ-  
խեցէ ունել ի կնութեան.... Այս կանոնը յա-  
ճախ կրկնուում է այլ կանոնագրութեանց մէջ:

Հանոնագրքերից շատերի մէջ գրուած է «զե-  
երդն մի իշխեսցէ»։ սակայն այդ հին սխալ պէտք  
է համարել վասն զի նախ որ գորան հետևում է  
և ոչորորդնամ ողջ առաջ օրուած իւ ու պիտին

մի՛ իշխեցէ և զորրորդն ապաշխարեսցէ և երրորդքն մեկնեցին և ապաշխարեսցեն»:

Բայց երբ որ այս կանոնը ժամանակի ընթացքում աչքաթող արին, Աիոն կաթուղիկոսը ստիպուեց վերստին նորովել այդ հրամանն, ըստ որում և Պարտաւի ժողովի (768?) որոշմանց մէջ կանոնագրումէ.

«Յառաջն առաջին սուրբ հարքն յիւրեանց ժամանակս արգելին զազատս և զանազատս յարեան մերձաւորութենէ. այժմ առ մեօք լուծեալ տեսամնեմք՝ մանաւանդ ազատաց՝ զկանովին ս. հարցն, զի անխօտիր խառնին ընդ իւրեանց մերձաւորսն անկարգ ամուսնութեամբ զուգեալ. յայսմ հետէ ցըրրորդ զարմ մի՛ իշխեցին ամուսնութեամբ զուգիլ, ապա թէ ոչ՝ նզովեցին ի մէնջ և ինքեանք տացեն պատասխանի Աստուծոյ ի մեծութեան նորա դատաստանի»:

Այսպիսով Հայաստանեալց Եկեղեցու հիմնական կանոնը հրամայուումէ հինգ դար շարունակ և յետոյ: Մեզ մնումէ այժմ պարզել թէ ինչէ այդ «մինչև ի չորրորդ ծնունդ» խօսքերի իմաստը:

(Կը շարունակուի):

Ա. ՏԵՇ ՄԻՔԵԼԵՎԵՆԻ



առաջինն էլ բաւական կլինի և ոչ դասական թուով նրկորդ՝ եթէ հինգերորդը արգելուած լինի՝ միմիայն չորրորդը չի կարող ընդ ապաշխարեանօք լինել. Երրորդ՝ չորրորդի և երրորդի կանոնազանցութեան դէմ կարգադրութիւն է անում ինչպէս կարող էր հինգերորդի համար ոչինչ չասել՝ թէ արգելուած էր. Սխալը յառաջացել է «. . . տառի առանձին կարգալուց և ըստ երկոյթին շատ հին է. Խսկ եթէ ուղիղ համարենք «զինգերորդն», այն ժամանակ այդ պէտք է բացատրուի թէ հինգերորդը գուարութեամբ թոյլատրել՝ որպէս զի կանոնազանցութիւնը գիւրաւ չկատարուի:

Սակայն ես հետեւում եմ տրամաբանական իմաստին և մանաւանդ մի մագաղաթեայ հին օրինակի ընթերցուածքին. այս օրինակը գեղեցիկ ընթերցուածքներ շատ ունի: Ումանք էլ ունին «ցհինգերորդն մի իշխեցէ», այսինքն որ հինգերորդը կարող են պսակուիլ, այս ևս կարելի է ուղիղ հտմարել:

## ՊԱՏՄԱԿԱՆ

ԹՐԴԻՒԵԼՈՒԹԻ

Ա.



յրարատնահանգի հարաւային գաւառաց մին է բազրեանդ, որ բռնած է Արածանին և կամ Մուրաղը կազմող երկու ծիւղերու, Շեռեան ու Մուրատ գետոց հովտի ամբողջ

տարածութիւնը և կամ այսօր Ցիատին (Ցահապիվան), Գարաքիլիսայ և Ալաշկերտ Վաղարշակերտ) կոչուած վայրերն, որք ի հիւսիսոյ շրջապատուած են Զրարաշն լեռանց և ի հարաւոյ Ոլիճ-կետուկ Ծրի-կիրճ և Աւտաղ (Ճաղկանց) լեռանց շղթայով. նաև Ուռկաւէտ (Քոսատաղ) և Նպատ լեռանց միջավայրը՝ որոց առաջինը կը գտնուի Բաղրեանդայ արևմտեան կողմն, երկրորդն արևելեան ։

Բնական զիրքով երկու գեղեցիկ դաշտագետիններու բաժանուած է բազրեանդ, արևելեան և արևմտեան, զորս կը բաժանեն Աինակ

1. Ըստ պատմութեան Արածանին կը կարծուի Ծեռեանի և Մուրատի միացմամբ ի հարաւ ուղղուած Մուրատ (Եփրատ) գետն, որ կսկսի Բագրեանդայ արևմտեան դաշտի կեդրունը գտնուած Գարաքիլիսայ զիւղաքաղաքից ՚/, ժամ ի հարաւ կերկարի ի Մանազկերտ, Նպահունիս և ի Մուշելն, ոմանք կասեն թէ Արածանին առանձին ջուր է, որ Բիւրակնեան լեռնէն կիջնայ: Կանցնի Խոնուի և Նպահունեաց միջէն, Եփրատի կը խառնուի. Կը նուսայ մէջ Բինկօլի ջուր կասուի, խսկ Նպահունեաց մէջ Զեռնակայ ջուր:

2. Մուրատ այն ջուրն է, որ Շաղկանց լեռներէն կիջնայ. Ծեռեանի հետ խառնուելով մեծ Մուրատը կամ Եփրատը կը կազմէ:

3. Այս լեռներն Բագրեանդայ սահմաններէն  
1—2 ժամ ներս են: